ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ -
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՆԴԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1933 ԹՎԱԿԱՆԻՑ

"NORK" MAGAZINE OF WRITERS UNION OF ARMENIA is being published from 1933

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԵՈՒԹՅՈՒՆ

26 Սարգիս ԿԻՐԱԿՈՍԵԱՆ. Օրհներգ մերօրեայ ասպետներուն

46 Գայանե ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՁԱԿ

3 Ռուբեն ՀՈՎՍԵՓՅԱՆ. Ծիրանի ծառերի տակ

36 Վաչագան ԳՐԻԳՈՐՅԱՆ. Նամակ

51 Թորոս ՁԻՖԼԵԱՆ. Անզէն հերոսներ

63 Խաչիկ ԽԱՉԵՐ. Անելանելին
Ապրեք, երեխեք, բայց...

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ - 10

73 Լեւոն ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ. Քաղաքականությունը իբրեւ սպանության միջոց

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

81 Գրիգոր ՁԱՆԻԿՅԱՆ. Համաստեղ եւ Կարապենց տունդարձի հավատը

104 Լեւոն ՄԿՐՏՉՅԱՆ. «Մենակ մեկ Հայաստան կա, ան ալ հոս է...»

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

119 Ռուբինա ՓԻՐՈՒՄԵԱՆ. Յակոբ Կարապենցը՝ հայապահպանման զինուոր...

ԱՇԽԱՐՀԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

124 Գաբրիել Գարսիա ՄԱՐԿԵՍ. Սերը ժանտախտի օրերին

1'98

Ռուբինա ՓԻՐՈՒՄՅԱՆ

Յակոբ Կարապենցը՝ հայապահպանման զինուոր, սփիւռքահայ ինքնութեան փնտռող

Ժամանակը դեռ իր դրոշմը չի դրել նրա գրական ժառանգութեան վրայ, նրա գրականութիւնը դեռ յաւիտենականութեան ճամբան չի բռնել ու ներկայի կենդանի կապերով, ապրող ու շնչող թելերով շարունակում է ցանցել մեր իմացական, գիտակցական ընկալումը: Հնարաւո՞ր է հաստատ ու ինքնավստահ դատել, քննադատել, գնահատել, գինը հատել եւ կարապենցեան գրականութեան վկայագիրը արծակել, նրա տեղն ու դիրքը հայոց գրականութեան պատմութեան մէջ ճշտորոշել: Հնարաւո՞ր է սառնութեամբ հաստատել, թէ փակուած է էջը նրա կեանքի, ընդհատուած է յաւիտեան նրա վէպը դեռ իր գագաթնակէտին չհասած: Հնարաւո՞ր է անձը, որ դեռ այնքան մօտից է խօսում մեր սրտերին, անջատել իր գրականութիւնից եւ այդ գրականութիւնը դիտարկել իր ժամանակի ու միջավայրի պայմաններում: Հազիւ թէ: Ուրեմն չեմ յաւակնում: Հաւատում եմ, որ մէկը մի օր պիտի գայ եւ խղճմտութեամբ ու գիտական մեթոդաբանական տուեալներով զինուած պիտի ուսումնասիրի, վերլուծի, մեկնաբանի ու իր ժամանակի խօսքն ասի 40 տարիների ընթացքում նրա ստեղծած գրականութեան մասին՝ ամբողջ 9 հատորներ սկսած 1955-ից արդէն գրի առնուած ու պարբերականների մէջ լոյս ընծայուած եւ 1970-ին «Անծանօթ Հոգիներ» ժողովածուով հրատարակուած պատմուածքներից մինչեւ «Կարթագէնի Հարսը», «Նոր Աշխարհի Հին Սերմնացաններ»ը, «Միջնարար»ը, «Ադամի Գիրք»ը, «Ամերիկեան Շուրջպար»ը, «Անկատար»ը, մինչեւ «Երկու Աշխարհ» ու վերջինը՝ 1994-ին հրատարակուած «Մի Մարդ Ու Մի Երկիր», բոլորը միասին շուրջ 3000 էջ եւ դեռ մի շարք գրադատական եւ այլ յօդուածներ թերթերում ցրուած եւ անտիպ բանաստեղծութիւններ ու գրութիւններ: Մի այդպիսի համապարփակ մենագրութիւն կլինի արժանի վերաբերումը Յակոբ Կարապենցի անձին ու գործին: Իսկ իմ հպանցիկ ընթերցումը այսօր թող որ գայ աւելանալու նրա գրական ժառանգութեան վրայ, գումարուի այն բոլոր վերլուծական ընթերցումներին, որ կատարուել են ու պիտի կատարուեն, ճոխացնելու, հարստացնելու նրա ճանաչումը, սատարելու նրա ժառանգութեան յաւիտենականացման:

«Իմացական մեր կեանքին հաղորդ ամէն ոք գիտակ է նուազումին, որուն ենթարկուած է սփիւռքեան գրականութիւնը»:

«Տաղանդներ կա՛ն. կու գան անոնք՝ անկախաբար իրենց ու մեր կամքէն, սակայն չեն բացուիր մեր անդաստաններուն վրայ: Կա՛մ ուղի կը փոխեն, կա՛մ

կը ծաղկին դրացի պարտէզներու մէջ: Օդը քիչ կու գայ իրենց՝ հայ շրջապատի մէջ. յաճախ նաեւ թոյն կը դառնայ: Կը փորձեն ներշնչել, սակայն կը զգան թէ թոքերու կծկում կ՚ունենան»:

1970ին «Հայրենիք»ում գրած Մինաս Թէօլէօլեանի այս տողերը բնութագրում էին ամերիկահայ Սփիւռքի գրական մթնոլորտը այդ շրջանին, որ իմացական անլութիւն էր արտացոլում, գրական եւ մշակութային ամայացում էր պատկերում. պատկերում էր տագնապը, որ Սփիւռքինն էր, տագնապը, որ յետպատերազմեան մշակոյթի եւ հաղորդակցական միջոցների յեղաշրջումն էր բերել: Յետպատերազմեան այս յեղաշրջումի պարտադրած պայմաններում հնից եկած, հին աշխարհի մշակութային հաւաքականութիւնների տարտղնուած մնացորդացի արտայայտչական ձեւերն ու միջոցները ժամանակավրէպ էին ու անհարազատ: Պայքար էր հայ մնալը. պայքար էր՝ գուցէ աւելորդ կամ նոյնիսկ անընդունելի:

Եւ Կարապենցը մաքառում էր հոսանքն ի վեր: Նա գրական ասպարէզ էր մտել իբրեւ հայ գրագէտ, որ գիտակցաբար գրում էր հայերէն: Իր արուեստի արտայայտութեան լեզուն ընտրել էր հայերէնը, որ միայն աննշան, լուսանցքային արժէք պիտի ունենար միջավայրի մշակութային կեանքում: Ընտրել էր արեւելահայերէնը՝ աւելի խորթ այդ օրերի ամերիկահայ Սփիւռքի համար, արեւելահայերէնը՝ սակայն մաքուր, հիւթեղ, պատկերաւոր ու հարազատ, որ իր հայրն էր փոխանցել, որ Թաւրիզի Հայկազեան դպրոցն էր տուել, որին տիրապետել էր Թաւրիզի փողոցներում աղջիկներին սէր բացատրելիս, իր տարեկից տղաների հետ կռուելիս ու հայհոյելիս:

Միջին Արեւելքի մշակութային ու կենցաղային խստաբարոյ հասկացողութիւններով սահմանուած շրջանակի մէջ դաստիարակուած Յակոբիկը, բարձրագոյն կրթութեան իղձով, նոր հորիզոններ նուաճելու ձգտումով, Ամերիկա էր հասել: Ու պիտի գտնէր ինքն իրեն, պիտի յայտնաբերէր իր նոր եսը, այսինքն մի նոր հասկացողութեան զար ինքն իր հետ, բնորոշէր իր եսի յարաբերութիւնը սփիւռքահայ այս նոր գաղութի պատմութեան հետ, ընկերութեան հետ: Այդ երկար ու ցաւոտ որոնումի արդիւնքը ու վերջապէս այդ եսի ձեւաւորումը բնութագրւում է «Երկու Աշխարհ» գրական փորձագրութիւնների մէջ (1992), պարզ ու որոշ.

«Ես Սփիւռքի ծնունդ եմ: Իմ աշխարհը Սփիւռքն է: Իմը արտերկրի գրականութիւն է, մեծ ոստանների թոհուբոհը, Սփիւռքի կոտորակուած հայութիւնը, հայն ու ամերիկացին, մարդն ու միջուկային արհաւիրքի մշտառկայ մղձաւանջը: Մենք սարսափած ու շփոթահար այն սերունդն ենք, որ պայքարում է յանուն մարդկային իրաւունքների: Պայքարում՝ յանուն մեր փրկութեան: Կարեւոր՝ նաեւ այն տեսակէտից, որ կա՛նք, յարատեւում ու ստեղծագործում ենք, փորձնական ու յեղափոխական, թէկուզ ողնչապաշտները վաղուց մեր մահուան ահազանգն են հնչեցրել» (էջ 59):

Անձնական կեանքում ու գործի ասպարէզում յաջողել էր նա: Ամերիկեան թերթերի թղթակից էր ու աշխատակից՝ իր կրթութեամբ, իր գործով: Ուրեմն, որքան աւելի դիւրին պիտի լինէր նրա համար նուիրուել իր ընտրած գործի ասպարէզին, ապրել հանգիստ, ու իր ստեղծագործական մտքի թռիչքներին յագուրդ տալ հենց միջավայրի հետ քայլելով, միջավայրի լեզուով արտայայտուելով: Ինչո՞ւ գրել մի լեզուով, որ կարդացող չունի, գրել այնպիսի նիւթերի մասին, որ մի բուռ փոքրամասնութեան ցաւն է, տառապանքը, կեանքի քնջուկը: Ինչո՞ւ արտադրել այդքան առատ, այդքան եռանդով, երբ վաղուց էր հնչեցուել իր ու իր տեսակների մահուան ահազանգը: Ինչո՞ւ: Ինչո՞ւ: Այդ ինչուները

կախուած մնացին ո՛չ միայն Կարապենցի գլխին իր ամբողջ կեանքում, այլ չարչարեցին, բզկտեցին հոգիները նրա կերտած հերոսների, որոնցից ամէն մէկը մի բեկոր ունենք նրա հոգին արտացոլող, ամէն մէկի մէջ մի բան կայ նրա անձից, հոգու տառապանքից, ցաւից, ուրախութիւնից, յաջողութիւնից, ձախողութիւնից: Նրանք էլ Կարապենցի պէս իրենց դալուկ աչքերում կրում են տարագիր ժողովրդի ցաւը, կարօտը («Որեւէ Տեղից Մինչեւ Այստեղ», էջ 156, «Անծանօթ Յոգիներ»):

«Մի Մարդ Ու Երկու Շիրիմ» պատմուածքի հերոսը, 1960-ական թուականներին Քոլումբիա համալսարանի ուսանող Վահէ Վահանեանը ինչպէ՞ս պիտի կարողանար ձերբազատուել Եղիշէ Չարենցի ճնշող ազդեցութիւնից, դուրս գալ նրա բանաստեղծութեան բանտող, առինքնող աշխարհից ու հաշտութեան եզր գտնել չարենցեան այդ պաշտամունքի եւ John F. Kennedy-ի համամարդկային գաղափարների հանդէպ իր ունեցած հիացումի միջեւ: Ինչպէ՞ս պիտի կարողանար հանգիստ, առանց խղճի խայթի ու զղջումի, նայել Ինգրիդի ոսկեշաղ դէմքին ու նրա մէջ տեսնել կինը, իր սիրոյ աստուածուհին, իր կեանքի ընկերը:

Ինչո՞ւ է տառապում «Փայտէ Նժոյգ»-ի հերոս՝ Յրանդ Միսեանը: «Ինձ մօտ այլեւս նոր տարածք է ստացել ներքին պայքարը,- ասում է նա:- Երկու անհատականութիւններ, մէկը ամերիկացի Գրանթը, իսկ միւսը հայ Յրանդը, որոնք ոգորում են միմեանց դէմ, տապալում իրար եւ ջանում խորտակել մէկը միւսին: Ու յաճախ, երբ երեւութապէս յաղթական է թւում ամերիկացին, չգիտես թէ որտեղի՞ց գլուխ է բարձրացնում հայը եւ իր գոյութիւնը պարտադրում»:

«Տառապում եմ: Տառապել եմ մանկութիւնիցս ի վեր, երբ Սան Ֆրանսիսքոյում, իմ հասակակիցների հետ փողոցում խաղալիս իմ լեզուն չէին հասկանում եւ «կռուարար սիւրիացի» անուանում» («Փայտէ Նժոյգը», էջ 20, «Անծանօթ Յոգիներ»):

Յայրենի հողի տենչը ինչո՞ւ է լսւում նոյնիսկ Քենթաքիի մի աննշան քաղաքի ասֆալտապատ փողոցներում եւ Արտաւին դէպի իրեն կանչում: Խորհրդային Միութեան հալածանքներից ու Սիբիրի աքսորից փախած, Ամերիկայում նոր կեանք ստեղծել փորձող Արտաւազդ Սրմաքեշխանլեանը, «կորած ճամբաների այդ մոլորուած, անհանգրուան անցորդը», ինչո՞ւ է մինչեւ ինքնասպանութիւն հասնում («Որեւէ Տեղից Մինչեւ Այստեղ», էջ 156, «Անծանօթ Յոգիներ»):

Ինչո՞ւ է յուսալքուել Սուրէնեանը. չի մերւում, չի առնչւում իր շրջապատի հետ: Նրան «մռայլ հայ» են անուանում: Ինչո՞ւ է «կորցրել պայքարի ոգին եւ ակամայից մխրճուել յուսահատութեան գորշ ցանցերի մէջ» («Անծանօթ Յոգիներ», էջ 130, «Անծանօթ Յոգիներ»):

Վերջապէս, ո՞ւր է սկզբնաղբիւրը այս տառապանքի:

Կարապենցի կարծիքով արեան կանչն էր, չինելիութեան խարիսխը, «նախնիքների ստուերները», որ հետեւում են հայ մարդուն ամենուրեք, որ նրա անգիտակիցի մէջ ամուր խարսխուած՝ հսկում են նրա գիտակից աշխարհընկալման վրայ: Յարթֆըրդի Բուշնըլ սրահում Urban Renewal Federation of America (URFA)-ի համագումարին իբրեւ թղթակից ներկայացած Կարապենցի, կամ այդտեղում՝ Jack Karapetian-ի համար URFA վերտառութիւնն անգամ բաւական է նրան դուրս քաշելու իրականութիւնից ու 70 տարի յետ եւ հազարաւոր մղոն հեռու տանելով Կիլիկիոյ Ուրֆա քաղաքը փոխադրելու: URFA-ի գործառնութիւնների նախագի՞ծն է կարդացւում թէ 1915ի Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանութեան պատմութիւնն է արտասանւում: Jack Karapetian-ը այս վերջինն է լսում: Ժամանակի եւ տարածութեան օրինաչափերը խախտուած են, չփոթի մատնուած: Սփիւռքահայ մարդու առօրեայ կեանքի վրայ ճնշող Յայոց

Եղեռնը խախտել է կեանքի բնական օրէնքները: Եւ Կարապենցը անդրադառնում է յանկարծ. «Տարիներիս ամբողջ երթի վրայ միշտ կախուած է եղել իմ նախնիքների շուքը, որպէս յարատեւման բնազդ ու արեան ձայն, իբրեւ խարիսխ գոյութեան» («Մեր Նախնիքների Ստուերները», էջ 40, «Անկատար»):

Ինքնութեան երկուութեան սուր պայքարը չի դադարում: Կարապենցի գրականութիւնը իր ամբողջութեան մէջ դառնում է այն փորձադաշտը ուր ի յայտ է գալիս եսի եւ իր պատկանած ընկերութեան յարաբերութիւնների փոխակերպումը. իսկ այս փոխակերպումը արդիւնք է ազգային պատկանելիութիւնների բախումների, բախում՝ արդի սփիւռքահայ մարդու գիտակցութեան եւ նախնիքների փոխանցած ու նրա անգիտակիցի մէջ ամրացած աւանդական միթերի միջեւ: Ահա՛ հանգոյցը, լարումը, tension-ը կարապենցեան գրականութեան:

Կարապենցի գեղարուեստական արձակը պատկերում է առօրեան սովորական մարդու, որ կարող եմ ես լինել, դու, նա՝ մեր հոգսերով, մեր սփիւռքեան պայքարով, մեր ճիգով՝ հաշտեցնելու մեր երկու ինքնութիւնները, որոնց յաւիտենական հակադրութիւնը ցաւ է պատճառում: Ի՞նչ է այդ անբացատրելի զգացումը՝ մի այլ աշխարհի պատկանելու, այդ նուիրումը դէպի մի երկիր, մի ժողովուրդ, որ հեռու է, երբեմն նոյնիսկ անծանօթ, բայց այնքան մօտիկ, այնքան սիրելի:

Կարապենցի կեանքը դարձաւ գիտակցական պայքար՝ այդ երկուութեան միջեւ հաւասարակշռութիւն գտնելու: Պայքար հանապազօրեայ՝ «յանուն հացի, հաւաքական ճիգի եւ ամէնից կարեւոր՝ յանուն հայապահպանման» («Յառաջաբանի Փոխարէն», էջ 5, «Նոր Աշխարհի Հին Սերմնացանները»): Հայը տարագիր է ամէն տեղ, եւ «ամէն տարագրի սրտում տակաւին մխում է հայրենի տան կարօտը.... Ամերիկեան քաղաքացիութեան քառասուն հատ վաւերագիր տուր իրենց, նորից կասեն, որ իրենք հայ են: Ո՛չ միայն հայ, այլեւ քեսապցի, այնթապցի, եդեսիացի, կաս Աստուած գիտէ որտեղացի» («Ջեֆերսոն», էջ 22, «Նոր Աշխարհի...»): Սրանք Ամերիկայի Ջեֆերսոն քաղաքի բնակիչներն են, երեւակայական մի քաղաք, որ ներկայացնում է մանրաշխարհը հայոց տարագրութեան, ուր դարասկզբին գաղթած հայերը այնտեղ «Ամերիկայում գտնուելով հանդերձ.... Ամերիկայում չեն ապրում: Կերտել են իրենց ուրոյն պատեանը, մտել մէջը եւ ամփոփուել... Սեւ օրերի բեռը շալակած եկել են Ամերիկա (նոյն): Եւ ցեղի վերքը բուժելու համար աշխատում են, շինում» նոր աշխարհի այս հին սերմնացանները (էջ 14): Կարապենցը արձանագրում է Ջեֆերսոնի պատմութիւնը, կարծես պատմութիւնը սփիւռքահայ գեթոների: Երկրորդ սերունդը ամերիկացել է: Բայց «յայտնի չէր որտե՞ղ էր սկսում ամերիկացին, որտե՞ղ վերջանում հայը: Հայը երբեւէ վերջանո՞ւմ է» (էջ 15): Յետոյ գալիս է ամերիկածին սերունդը, հին ու նոր աշխարհների պատուաստից առաջացած գեղեցիկ աղջիկներ ու տղաներ, որոնց ուղին տարբեր է: Մոլեռանդ չեն, ազգային նուաստացման զգացում էլ չունեն. «նրանց ազգասիրութիւնը գիտակցական է, ուստի եւ զերծ հոգեբանական բարդոյթից... իրենց ազգային մեծութիւնը շարունակ ապացուցելու հարկադրանքի տակ չեն... ինքնավստահ են: ...Հայրերը չեն սիրում այդ: Կարծում են թէ զաւակները ուծացել են: Եւ խրամատը թէ՛ խորանում եւ թէ՛ տարածւում է (էջ 19-20):

Ջեֆերսոնի դիալեկտիկական օրինակը տարածւում է Կարապենցի բոլոր ստեղծագործութիւնների մէջ, եւ նկարւում է Սփիւռքը իր բոլոր երեսներով: Իսկ այդ բոլորի սինթեզիսը՝ արդի սփիւռքահայ մարդու կերպարի փնտռտուք:

Կարապենցը իր կեանքի մեծ մասը, աւելի քան կէս դար, ապրեց ու ստեղծագործեց Ամերիկայում: Նրա գրականութեան անբաժանելի մասը դարձաւ Ամե-

ռիկան՝ ֆիզիքական, հոգեկան, թէ՛ բնազանցական: Բայց Ամերիկան մնաց լուսանցքային, չկարողացաւ տիրել նիւթին: Հայրենիքը, չտեսած Հայաստանը, կառչած մնաց նրա երեւակայութեան մէջ ու դարձաւ փորձաքարը նրա ինքնութեան: «Ես ծնուած օրից ի վեր աքսորական եմ եղել,- ասաց Վաչէ Եարջանեանը իր նոյնպէս աքսորական, աներեւոյթ ընկերոջ՝ Վագրին, որ իր եսն էր հաւանաբար, իր ներաշխարհը... Ես նոյնիսկ հայրենիքում ինձ աքսորական եմ զգացել» («Վերադարձ Ու Վագր», էջ 11, «Մի Մարդ Ու Մի Երկիր»): Աքսորականի զգացումը չփարատուեց նրա հոգում անգամ երբ հայրենիքը գրկաբաց ընդունեց նրան՝ հայրենիքի վտարանդի տաղանդաւոր զաւակին: Նա արդէն կորցրել էր ռիթմը իր ժողովրդի, նրանց հաւաքում օտար էր, այցելու-զբօսաշրջիկ.

«Երաժշտութիւնը հողի մէջ էր, ձիւնի մէջ, իրենց մարմինների մէջ, ես ճամբորդ՝ Բրուքս Բրադրրզի հագուստների մէջ, կորցրել էի դաշնը արեան ու հողի հետ եւ ձախաւեր սրունքներով փորձում էի վերագտնել ռիթմը, որը մաշուել էր օտար պողոտաներում» («Հայկական Շուրջպար», էջ 12, «Անկատար»):

Նա ինքն իրեն զգաց աքսորի մէջ ու կարծես աքսորն ու աքսորականի հոգեբանութիւնը դարձաւ նախապայմանը նրա ստեղծագործութեան, դրսեւորումը նրա մասնայատկութեան:

Յակոբ Կարապենցի գրականութիւնը Սփիւռքն է տարրալուծուած, իսկ Սփիւռքը եղեռնն է դեռ չմարսուած, երկարաձգուած: